ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
2021, № 2, 47- 56 *Կառավարում*
https://doi.org/10.46991/BYSU:G/2021.12.2.047

# ՀԵՌԱՎԱՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԲՈՒՀԵՐՈՒՄ

ՆՈՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հեռավար կրթությունը բուհերում, ի տարբերություն ավանդական կրթության, կիրառում է ոչ միայն տեխնիկական, այլև մեթոդաբանական լրացուցիչ գործառույթներ: Հատկապես փոփոխությունների են ենթարկվում կառավարման վերահսկողական և մոտիվացիոն գործառույթները, որոնք առանձնահատուկ դրսևորումներով են հանդես գալիս առցանց կրթական համակարգում: Բացի այդ, հեռավար կրթության պարագայում կարևորվում է շահառուների մասնակցային կառավարման բաղադրիչը, երբ շեշտադրում է արվում սովորողի ինքնակազմակերպմանը և ուսանողակենտրոն ուսուցմանը:

**Բանալի բառեր** – *առցանց ուսուցում, հեռավար կրթության կառավարում, կրթական ծրագրեր, ուսումնառության վերջնարդյունքներ, MOODLE հարթակ*

Հեռավար կրթությունը, որը հատկապես COVID-19 աշխարհավարակից հետո արագորեն արմատավորվեց համալսարանական համակարգում, ունի իր կառավարման առանձնահատկությունները, քանի որ գործառույթներով և նպատակադրումներով էականորեն տարբերվում է ավանդական կրթության կազմակերպչական ձևերից: Եվ այդ տարբերությունները բնավ չեն սահմանափակվում տեղեկատվական տեխնոլոգիաների, ծրագրային ապահովումների, հաղորդակցման կապուղիների հնարավորություններով:

Հեռավար դասավանդման ժամանակ ծագում են մեթոդաբանական նոր խնդիրներ, որոնք առնչվում են ակադեմիական խմբերի կենդանի շփումների պակասը լրացնելուն, ուսանող-համակարգիչ հաղորդակցման անկենդան մթնոլորտը հնարավորինս գրավիչ դարձնելուն, ուսանողի ինքնամեկուսացման բացասական հետևանքները հաղթահարելուն, սովորողի ինքնակազմակերպման աստիճանը բարձրացնելուն, որոնք կրթության կառավարման համար նոր մարտահրավերներ են:

Այսօր արդեն ՅՈՒՆԵՍԿՕ-ն կանխատեսում է, որ մոտ ապագայում սովորողները իրենց ուսումնառության 30-40%-ն են անցկացնելու լսարանում, իսկ մյուս մասը հատկացնելու են հեռավար ուսուցմանը: Ավելին, արդեն իսկ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ուսումնառության զգալի ժամանակը ինքնակրթության վրա ծախսելու միտում է նկատվում: Հետևաբար, առցանց ուսուցման ընդլայնումը ակնառու է դառնում թե՛ դպրոցական, և թե՛ համալսարա-

նական ուսումնառության բոլոր փուլերում[1]:

Հեռավար դասավանդումը տեսանելի ապագայում կրթական շուկայում գերիշխող դիրք է գրավելու և ունենալու է կազմակերպչական հեռանկարային առանձնահատկություններ: Մի կողմից՝ ավանդական կրթության մեթոդաբանությունը որոշակի առումներով չի կարող արդյունավետ համարվել վիրտուալ միջավայրում: Մյուս կողմից՝ մանկավարժական նորամուծությունների անհրաժեշտություն կառաջանա, որով կձևավորվի արդյունավետ հետադարձ կապ դասավանդողների և ուսանողների միջև:

*Գծապատկեր 1*

**Արդյունավետ առցանց ուսուցման կազմակերպման միջավայրին նպաստող գործոնները[2]**




Եվ եթե վերոնշյալ հիմնախնդիրները փոքր-ինչ դանդաղ ընթացք էին հաղորդում առցանց ձևաչափով համալսարանական կրթությանը, ապա վրա հասած COVID-19 աշխարհավարակը պարզապես պարտադրեց բուհերին համատարած անցնել հեռավար ուսուցման՝ ի հայտ բերելով մի շարք մարտահրավերներ, որոնք ներկայացվում են խմբերով (տե՛ս գծապատկեր 1):

Այսպիսով, հեռավար ուսուցման արդյունավետ կառավարումը ուղեկցվում է մի շարք խնդիրներով, որոնք տեխնիկական, սոցիալ-հոգեբանական, առողջապահական, ինչպես նաև մեթոդական բնույթի են: Ուստի, համաճարակով պայմանավորված առցանց ուսուցման այսօրվա «ինտերվենցիան» համալսարաններ արդյունավետության առումով

---

[1] Տե՛ս **Խ. Բեզիրջյան, Վ. Խաչատրյան, Գ. Հովհաննիսյան, Ս. Բաբայան,** Հեռավար ուսուցման կազմակերպումը և իրականացումը կանոնակարգող փաստաթղթերի ժողովածու //ՀՀ պետական կառավարման ակադեմիա, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, 2017, էջ 8:

[2] Կազմվել է հեղինակի կողմից:

կարդարացվի միայն այն դեպքում, երբ համակողմանիորեն հաշվի առնվեն և ներդաշնակեցվեն թվարկած գործոնները (տե՛ս գծապատկեր 1):

Առցանց ուսուցումը հաստատուն կերպով արմատավորվում է համալսարանական կրթական միջավայրում՝ մրցակցային դիրքեր գրավելով դասավանդման ավանդական մեթոդների նկատմամբ: Եվ պատճառը միայն այն չէ, որ ուսուցման այս ձևն ավանդականի նկատմամբ ավելի քիչ ծախսատար է, սովորողների զանգվածային ընդգրկում ունի, կիրառում է ժամանակակից տեղեկատվական համակարգեր և աչքի է ընկնում կազմակերպման հարմարավետությամբ: Այսօր արդեն կրթական ծառայությունների շահառուները, լինեն ուսանողներ, դասախոսներ, թե գործատուներ, ձգտում են կրթության ոլորտում տեսնել առավել դինամիկ զարգացումներ: Մի կողմից, գիտելիքը ներկայումս արագ է «հնանում», մյուս կողմից՝ այն ուսանողի համար ավելի բազմաոլորտ ու բազմաշերտ է դառնում, քանի որ ընդլայնվում է շրջանավարտների հմտությունների և կարողությունների շրջանակը[3]:

Եվ ստացվում է, որ միայն լսարանային դասախոսություններով ու պարապմունքներով հնարավոր չէ պատրաստել աշխատաշուկայում մրցունակ շրջանավարտներ: Կրթությունը պահանջում է բազմակողմանի տեղեկացվածության ապահովում, խմբային լայնածավալ քննարկումներ, ակադեմիական զանգվածային բանավեճեր, փորձառության փոխանակումներ, որոնք առավելագույնս ապահովվում են հենց առցանց ուսուցման պարագայում:

Առցանց ուսուցումը կրթության ոլորտի շահառուների համար դառնում է գրավիչ նաև ժամանակի կառավարման առումով: Կոնտակտային շփումների պահանջի բացակայությունը հնարավորություն է ընձեռում դասավանդման մասնակիցներին երկուստեք ճկունություն և անհատական մոտեցում ցուցաբերելու դասաժամերի կազմակերպման հարցում: Իսկ դա ներկայումս չափազանց կարևոր է, քանի որ ուսանողների զգալի մասը, հատկապես մագիստրատուրայում և դոկտորանտուրայում, գործատուի մոտ աշխատում է ուսումնառությանը զուգահեռ և կարողանում է առցանց սովորելու ընթացքում կարգավորել իր աշխատօրը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միջազգային պրակտիկայում առցանց ուսուցման համակարգում ավելի շատ ընդգրկված են հատկապես այն սովորողները, որոնք արդեն իսկ ունեն համալսարանական դիպլոմներ, սակայն, մասնակցելով վերապատրաստման դասընթացների, աշխատանքային նոր կարողություններ են ձեռք բերում կրթական աստիճան չտրամադրող հատուկ դասընթացներում (տե՛ս գծապատկեր 2): Սակայն, դրան զուգահեռ, աստիճանաբար մեծանում է մագիստրատուրայում և դոկտորանտուրայում առցանց ուսուցմամբ կրթական ծրագրերի տեսակարար կշիռը:

[3] Տե՛ս The future of on line education, https://www.weforum.org/agenda/2016/09/is-online-learning-the-future-of-education/

*Գծապատկեր 2*

**Առցանց կրթական ծրագրերով ԱՄՆ-ում սովորող ուսանողների բաշխվածությունը ըստ կրթական աստիճանների, 2020 թ.[4]**




COVID-19 համաճարակով պայմանավորված՝ 2020 թվականին Բարձրագույն կրթական եվրոպական տարածքում սովորող ուսանողների 68.9%-ը մասնակցել է հեռավար կրթության առնվազն մեկ դասընթացի: Ընդ որում, առաջիկա երեք տարիներին կանխատեսվում է այդ թվի աճ՝ տարեկան 5%-ով: Իսկ համաշխարհային մասշտաբով միայն 2020 թվականին ուսանողների 24.3%-ը մասնակցել է ամբողջական հեռավար ուսուցման հենքով մասնագիտական կրթական ծրագրերի, իսկ 75.4%-ը՝ հեռավար և ավանդական կրթական մեթոդների համակցման հենքով կազմակերպվող մասնագիտական կրթական ծրագրերի[5]:

Հատկապես համավարակից հետո համաշխարհային կտրվածքով առցանց կրթական ծառայությունների մատուցման շուկան կտրուկ ընդլայնվեց և 2020 թվականին հասավ մինչև 245 մլրդ ԱՄՆ դոլարի, իսկ որոշ կանխատեսումների համաձայն՝ 2025 թվականին այն կհատի 300 մլրդ ԱՄՆ դոլարի սահմանագիծը (տե՛ս գծապատկեր 3): Հայաստանի Հանրապետությունում նախքան համավարակը հեռավար ուսուցումը որոշ չափով արմատավորվել էր դպրոցական ծրագրերում և կիրառվում էր մարզերի հեռավոր և սահմանամերձ գյուղերում, իսկ մի շարք համալսարաններում այն նոր է կատարում իր առաջին քայլերը, և արդյունքում սովորողների շուրջ 2%-ն էր առնվազն մեկ հեռավար դասընթաց վերցրել, թեև մի քանի տարի է, ինչ հեռավար ուսուցման ոլորտը կարգավորող մի շարք փաստաթղթեր են մշակվել[6]: COVID-19

---

[4] Տե՛ս Distance Learning Statistics and Growth of Online Education in 2020, https://blog.otter.ai/distance-learning-statistics/

[5] Տե՛ս 50 Online Education Statistics: 2020 Data on Higher Learning & Corporate Training, https://www.guide2research.com/research/online-education-statistics

[6] Տե՛ս ՀՀ կառավարության 2010 թվականի փետրվարի 11-ի «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների հեռավար (դիստանցիոն) ձևով ուսուցման կարգը հաստատելու մասին» № 124-Ն որոշումը, ՀՀ կառա-

համավարակը 2020 թ. հայաստանյան բուհերին ստիպեց զանգվածաբար անցում կատարել հեռավար ուսուցման:

*Գծապատկեր 3*

**Առցանց կրթական ծառայությունների մատուցման համաշխարհային շուկայի փաստացի աճը և կանխատեսումը (մլրդ ԱՄՆ դոլար)[7]**




Ի տարբերություն ավանդական ուսուցման՝ առցանցի պարագայում բացակայում են սովորողի և դասախոսի միջև անմիջական հաղորդակցումը, ուսանողական խմբերում առկա ակադեմիական մրցակցությունը, բավական բարդ է ունկնդիրներին շահադրդելու խնդիրը, պահանջվում են անհատական և հոգեբանական պայմաններ, խիստ ինքնակարգապահություն, իսկ դա ուղղակիորեն կախված է սովորողի ինքնուրույնությունից և ինքնագիտակցությունից, հատկապես երբ կազմակերպվում է ուսանողակենտրոն ուսուցում[8]:

Առցանց ուսուցման պարագայում ուսանողների ակադեմիական գործունեության ակտիվության մոտիվացիան պետք է լինի ավելին, քան ավանդական կրթություն կազմակերպելիս, այլապես այդ ձևաչափով ուսուցումը կկորցնի գրավչությունը, ունկնդիրների համար կդառնա ձանձրալի, եթե համալսարանական միջավայրի բացակայությունը չլրացվի հեռաուսուցման հետաքրքրաշարժ և ժամանակակից կրթական տեխնոլոգիաներով:

---

վարության 2005 թվականի մայիսի 25-ի «Հեռակա, ինչպես նաև հեռավար (դիստանցիոն) ձևերով ուսուցում չթույլատրվող բարձրագույն կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու մասին» № 692-Ն որոշումը:

[7] Տե՛ս Elearning statistics 2020, https://www.edapp.com/blog/elearning-statistics-2020

[8] Տե՛ս **Ս. Երիցյան, Ա. Ճուղուրյան,** Ակադեմիական ազատություններ և ինքնավարություն, մենագրություն, Եր., 2009, էջ 56:

*Գծապատկեր 4*

**Առցանց կրթական ծրագրերի ուսանողակենտրոն հակվածությունը**[9]




Հարկ է ընդգծել, որ առցանց ուսուցման մեթոդաբանության շրջանակում պետք է կիրառվեն մի շարք կարևորագույն ակադեմիական գործիքներ, ինչպիսիք են՝ էլեկտրոնային ուղղորդող դասախոսությունները, էլեկտրոնային վարժանքները, հեռավար սեմինարները (WEB սեմինարներ), հեռարձակվող դասախոսությունները, խմբային առցանց քննարկումները (տե՛ս գծապատկեր 5): Թվարկած գործիքները հնարավորություն կստեղծեն ապահովելու ուսանողների ակադեմիական ակտիվությունը առցանց ուսուցման համակարգում և ուսումնառությունը դարձնելու գրավիչ:

*Գծապատկեր 5*

**Առցանց ուսուցման ակադեմիական նվազագույն գործիքակազմը**[10]




[9] Կազմված է հեղինակի կողմից:
[10] Կազմված է հեղինակի կողմից:

Ներկայումս լուրջ խնդիր է կրթական նորագույն գործիքները ավանդական համալսարանական ուսուցման էլեկտրոնային միջավայր փոխադրելն ու կիրառելն այնպես, որ համալսարանական ավանդական միջավայրում հեռավար ուսուցման ծրագրերում ընդգրկված անհատը հնարավորինս իրեն ուսանող զգա, ուսումնառությունը համարի գրավիչ ու հետաքրքիր, արժեքի իր ներկայությունը կրթական գործընթացում, բայց ստանա տեղեկատվական հասարակարգի պահանջներին համապատասխան կրթություն և աշխատաշուկայում ներկայանա որպես մրցունակ շրջանավարտ:

Այս առումով առաջարկվում են առցանց ուսուցման մոդուլի նախագծման առանցքային սկզբունքներ, որոնք փոխկապակցված են և պետք է գործեն միաժամանակ մոդուլի դասավանդման ամբողջ ժամանակահատվածում (տե՛ս գծապատկեր 6):

*Գծապատկեր 6*

**Առցանց ուսուցման մոդուլի կառավարման առանցքային սկզբունքները հեռավար դասավանդման կառավարման համակարգում**[11]




Չունենալով հնարավորություն մասնակցելու լսարանային դասընթացներին և մնալով «միայնակ» դեմ հանդիման համակարգչի հետ՝ հեռավար դասընթացին ուսանողն առաջին հերթին ակադեմիական վարքագծի կազմակերպման ուղղորդման կարիք ունի: Այս առումով ցանկացած մոդուլ նախագծելիս պետք է լսելի լինի դասախոսի խոսքը,

[11] Կազմված է հեղինակի կողմից:

երբ տեսաուղերձով դասավանդողը ունկնդրին ներկայացնում է դասավանդման նպատակը, խնդիրները, ակնկալվող ուսումնառության վերջնարդյունքները «գիտելիք – հմտություններ - կարողություններ» կտրվածքով: Այնուհետև ուսանողին հասցեագրված տեսաուղերձով պետք է ներկայացվեն սովորողի ուսումնառության եղանակները, գնահատման մոտեցումները և դասընթացին առնչվող կազմակերպչական այլ խորհուրդներ և ուղղորդումներ:

Կարևորվում է նաև առաջնորդող դասախոսությունների շարքը, որը հնարավորության դեպքում պետք է լինի տեսաձայնագրված, այլապես՝ PDF տեքստային ձևաչափով: Ունենալով համացանցից տեղեկատվություն ստանալու լայն հնարավորություններ՝ այնուամենայնիվ առանց ուղղորդող դասախոսությունների ուսանողը կխճճվի «տեղեկատվական սարդոստայնում»: Այս առումով հեռավար ուսուցման ժամանակ պարտադիր տրամադրվում են թեմատիկ և թիրախավորված դասախոսություններ, որոնք ուղղորդում են ուսանողին ճիշտ կողմնորոշվելու ուսումնառությանն առնչվող՝ համացանում առկա այլընտրանքային տեղեկատվության ընտրության հարցում: Հետևաբար, առաջնորդող դասախոսությունների առկայությունը պարտադիր է առցանց մոդուլի նախագծման գործընթացում (տե՛ս գծապատկեր 5):

Հեռավար ուսուցմանը հատուկ է «ձանձրույթի ախտանիշի» ձևավորման ռիսկը, սակայն որը հաղթահարելի է մուլտիմեդիա գործիքակազմով ակտիվ ուսումնառության շահադրդրդման կիրառման դեպքում (տե՛ս գծապատկեր 5): Հայտնվելով «էլեկտրոնային» միջավայրում և չզգալով ակադեմիական կենդանի լսարանի ջերմությունը, ունկնդրելով հեռավար դասախոսությունների շարք, միայնակ կատարելով էլեկտրոնային վարժանքներ, չընկալելով դասախոսի կամ դասընկերների՝ իրեն հասցեագրված գովասանքը՝ ուսանողի համար հեռաուսուցումը դառնում է պարզապես ձանձրալի: Հենց այստեղ է, որ դասավանդման մոդուլը նախագծելիս պետք է կիրառվեն շահադրդիչ ազդակներ, որոնք աշխուժություն կհաղորդեն ուսումնառությանը: Դրանք կարող են լինել հեռաուսուցմամբ մոդուլում ընդգրկված ուսանողական խմբի գնահատման վարկանիշային սանդղակում՝ սովորող անձի առաջադիմության դիրքի պարբերաբար ներկայացումներ, էլեկտրոնային վարժանքները ճիշտ լուծելիս էմոցիոնալ պատկերային նշանների վաստակումներ (gajets), մուլտիմեդիա ձևաչափով խրախուսանքներ և այլն:

Ինքնակազմակերպման խթանումը նույնպես կարևորագույն սկզբունք է առցանց ուսուցման նախագծման գործընթացում: Կրթական ոլորտում ինքնակազմակերպումը առավել հաջող է ստացվում հասուն տարիքային խմբերում, իսկ երիտասարդների մոտ այն առավել ռիսկային է: Հետևաբար, հեռավար ուսուցմամբ ցանկացած մոդուլ պետք է ուղեկցվի հատուկ հրահանգավորմամբ՝ մանրամասն ներկա-

յացնելով էլեկտրոնային թեսթերի, վարժանքների ընթացիկ և ամփոփիչ քննությունների ժամանակացույցը, վեբինարների օրերը, առցանց խմբային բանավիճային ակումբների կազմակերպման ժամերը:

Հատկանշական են նաև համացանցում ուսանողի ներկայության ժամային առավելագույն և նվազագույն սահմանաչափերի պահանջները յուրաքանչյուր մոդուլի գծով: Ուսանողը չպետք է պասիվ դիրք գրավի վեբինարների, առցանց բանավեճերի ժամանակ, որը հնարավոր է մշտադիտարկման ենթարկել ուսումնառության այդ գործընթացներում համացանցում նրա փաստացի ժամային ներկայությամբ: Մյուս կողմից՝ ուսանողներին ներկայացվում են համացանցում գտնվելու առավելագույն սահմանաչափեր՝ թեսթերը, էլեկտրոնային վարժանքները կամ քննական հարցերը լուծելիս: Բնականաբար, առցանց ուսուցման ժամային նման սահմանափակումները կստիպեն ուսանողին ինքնակազմակերպվելու և իրականացնելու արդյունարար ժամային կառավարում:

Ուսանողի սոցիալական ինքնամեկուսացման ռիսկերի կանխարգելումը նույնպես հաշվի է առնվում առցանց ուսուցման մոդուլի նախագծման ժամանակ: Այս առումով մոդուլը դասավանդելիս պետք է հնարավորինս օգտագործել տեսանկարահանված դասախոսական նյութեր, վեբինարներ, ուսանողական բանավիճային առցանց ֆորումներ, խմբային առաջադրանքներ և ծրագրեր, որոնք դասավանդման պրոցեսին կհաղորդեն խմբավարություն և հեռավար ուսուցումը չեն տանի անհատի ինքնամեկուսացման ճանապարհով (տե՛ս գծապատկեր 5):

Առցանց ուսուցման մոդուլի նախագծման վերոնշյալ սկզբունքների կիրառման տրամաբանական շղթայի կարևորագույն օղակ է հետադարձ կապի ապահովումը «ուսանող-դասախոս», «ուսանող-ուսանող», «ուսանող-էլեկտրոնային դեկանատ» հաղորդակցային ուղիներում: Հեռավար դասավանդման արդյունավետ կազմակերպումը մեծապես պայմանավորված է հետադարձ հաղորդակցման ուղիների անխափան գործունեությամբ, որով ավանդական ուսուցումը կարողանում է սահուն անցում կատարել էլեկտրոնային ուսումնառության միջավայր՝ մշտական կապ հաստատելով կրթական գործընթացի հիմնական շահառուների հետ (պրոֆեսորադասախոսական անձնակազմ, ուսանողական խմբեր, համալսարանի վարչակազմ և այլն):

Առցանց ուսուցման ծրագրերում իրականացված սոցիալական հարցումները վկայում են, որ ուսանողները, ավանդական ուսման համեմատ, առավել հաճախ են ընդհատում հեռավար ուսումնառությունը՝ համարելով այն դժվար, ակադեմիական բարդություններով ուղեկցվող և անգամ՝ ձանձրալի[12]: Հետևաբար, ներկայումս խնդիր է ա-

[12] Տե՛ս Online enrolment in US continues to grow, http://monitor.icef.com/2017/05/online-enrolment-us-continues-grow

ռաջանում առցանց ուսուցման մոդուլները կառավարելիս ստեղծել այնպիսի ակադեմիական միջավայր, որը հնարավորինս կապահովի համալսարանական կրթության ավանդույթները, ուսուցման ինտերակտիվությունը, ուսումնառության ինքնակազմակերպման բարձր աստիճանը, և որ ոչ պակաս կարևոր է՝ ի վերջո կձևավորի ուսանողակենտրոն ուսուցում:

**НОННА ХАЧАТРЯН** – ***Методологические проблемы организации дистанционного образования в вузах.*** – Организация дистанционного образования в университетах, в отличие от традиционного образования, использует не только технические, но и методологические дополнительные функции. В частности, меняются контрольно-мотивационные функции менеджмента, что особенно заметно в системе онлайн-образования. Кроме того, в случае дистанционного обучения используется компонент совместного управления бенефициаров, когда упор делается на самоорганизацию учащегося, а также студенто-ориентированное обучение. Особенно актуальным становится вопрос организации обучения в онлайн среде таким образом, чтобы не возникли проблемы с качеством образовательных услуг, самооизоляции студентов, пассивного поведения участников дистанционного обучения. В настоящее время становится необходимым создание онлайн академической среды, учитывающей традиции университетского образования и вместе с тем отличающейся высокой самоорганизацией обучения, что в конечном итоге сформирует студенто-ориентированную модель реализации учебных программ. В статье рассматриваются пути повышения эффективности организации дистанционного образования в университетах на базе гармонизации традиционных и инновационных подходов.

**Ключевые слова**: *онлайн-обучение, управление дистанционным образованием, образовательные программы, результаты обучения, MOODLE платформа*

**NONNA KHACHATRYAN** – ***Methodological Issues of Distance Learning Organization in Universities.*** – The organization of distance education at universities, in contrast to traditional education, uses not only technical, but also methodological additional functions. In particular, the control and motivational functions of management are changing, which is especially noticeable in the online education system. In addition, in the case of distance learning, a component of joint beneficiary management is used, when the emphasis is on student self-organization, and also student-oriented learning. Particularly relevant is the issue of organizing training in an online environment in order to solve problems with the quality of educational services, self-isolations of students, passive behavior of participants in distance learning. Currently, it becomes necessary to create an online academic environment that takes into account the traditions of university education and, at the same time, is distinguished by high self-organization of learning, which will ultimately form a student-oriented model for the implementation of educational programs. The article discusses ways to improve the efficiency of the organization of distance education based on the harmonization of traditional and innovative approaches to the provision of educational services at universities.

**Key words:** *online learning, distance learning management, educational programs, learning outcomes, MOODLE platform*